# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 119

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 06-ը դեկտեմբերի 2019 թվականի թիվ 15 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 06.12.2019թվականի թիվ 15 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. 2020 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

3. 2020 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին,

4. 2020 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

5. 2020 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

6. Արենի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին,

7. Արենի համայնքի ավագանու 18.10.2019թվականի թիվ 107-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, 2019 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին

8. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Տիգրան Խաչատրյանի դիմումը քննարկելու մասին,

9. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Ահարոն Հարությունյանի դիմումը քննարկելու և աղբի ու ջրի 2019 թվականի վարձավճարներից ազատելու մասին,

10.Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Աշոտ Դավթյանին դրամական օգնություն հատկացնելու մասին,

11. ՀՀ Վայոց ձոր մարզի <<Եղեգնաձորի Վետերանների տարածքային խորհուրդ>> հասարակական կազմակերպության դիմումը քննարկելու և դրամական աջակցություն տրամադրելու մասին,

12. Հայաստանի Հանրապետության Վարչապետին և ՀՀ Վայոց ձորի մարզպետին ուղերձ հղելու մասին,

13. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 120

### 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Արենի համայնքի տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 5 էջից :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԵԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**Հավելված**
**ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու**
**2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 120 որոշման**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
   1) հիմնական շենքերի և շինությունների համար՝
      - մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ,
   2) Սույն հավելվածի, առաջին մասի առաջին կետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
      - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար ՀՀ դրամ,
      - 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար ՀՀ դրամ,
      - 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ յոթանասունհինգ հազար ՀՀ դրամ,
      - 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ:
   3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
      - մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար ՀՀ դրամ,
      - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
   1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար ՀՀ դրամ,
   2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն հավելվածի 2-րդ մասի առաջին կետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
   3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար ՀՀ դրամ:
4. Արենի համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
   1) սահմանամերձ բնակավայրերում՝ հիսուն հազար ՀՀ դրամ,*
   2) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:
5. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
   1) սահմանամերձ բնակավայրերում՝ տասը հազար ՀՀ դրամ,*
   2) ոչ սահմանամերձ բնակավայրերում՝ երեսուն հազար ՀՀ դրամ:*
6. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
   1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
      - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 (երեք հազար) ՀՀ դրամ,*
      - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ,*
      - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000 (յոթ հազար) ՀՀ դրամ,*
      - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ:*
      - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.500 (տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:*
      - 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22.500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:*
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
      - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 (երեք հազար) ՀՀ դրամ,*
      - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ,*
      - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000 (յոթ հազար) ՀՀ դրամ,*
      - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ:*
      - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.500 (տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:*
      - 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22.500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:*

7. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
8. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար ՀՀ դրամ,
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար ՀՀ դրամ,
   3) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ,
   4) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ,
   5) խաղատների համար՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,
   6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ:
9. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
   1) հիմնական շինությունների ներսում՝
      - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,*
      - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար ՀՀ դրամ,*
      - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար յոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,*
      - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար ՀՀ դրամ,*
      - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ,*
      - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար ՀՀ դրամ:*
   2) ոչ հիմնական շինությունների ներսում՝
      - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար ՀՀ դրամ,
      - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար ՀՀ դրամ,
      - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
      - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար ՀՀ դրամ:
10. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ:
11. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար ՀՀ դրամ:
12. համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար:
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար ՀՀ դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,
3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,
5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,
6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով

13. Համայնքի տարածքում աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար սպասարկման վճար է սահմանվում՝
1) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 60 ՀՀ դրամ,
2) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 70 ՀՀ դրամ,
3) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 30 ՀՀ դրամ
4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 10 դրամ,
5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ամսեկան 3 ՀՀ դրամ:

14. Համայնքի տարածքում խմելու ջրի սպասարկման որակը բարձրացնելու համար խմելու ջրի սպասարկման վճար է սահմանվում՝
1) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) համայնքի տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 60 ՀՀ դրամ,
2) հասարակական և արտադրական տարածքների 1քմ-ի համար՝ (որտեղ տեղադրված չեն ջրաչափեր) ամսեկան 100 ՀՀ դրամ,
3) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համար (որտեղ տեղադրված են ջրաչափեր) 1 խմ-ի համար՝ ամսեկան 30 ՀՀ դրամ,
4) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ագարակաձոր բնակավայրում բնակելի տների տնամերձ հողամասերի ոռոգման համար օգտագործվում է խմելու ջուրը, խմելու ջրի վարձ է սահմանվում ամսեկան 500 ՀՀ դրամ՝ մեկ տնտեսության համար:

15. համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում, որտեղ առկա են ինքնահոս ջրատարեր, որոնք սպասարկում է համայնքապետարանը, ոռոգման ջրի սպասարկման վճար սահմանել՝
1) 1 հա-ի համար տարեկան 20 հազար ՀՀ դրամ,
2) Արենի բնակավայրը որպես սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայր՝ 1 հա-ի համար տարեկան 10 հազար ՀՀ դրամ
3) Աղավնաձոր բնակավայրում՝ 1խմ-ը 7 ՀՀ դրամ:

16. Համայնքապետարանի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության հայտերի գրանցման համար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ տեղական վճար:

17. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող շարժական և անշարժ գույքը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց մրցույթում կամ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը համայնքապետարանի բյուջե է վճարում փոխհատուցման վճար՝ գույքի չափագրման, գնահատման, կադաստրային ծախսերի և հայտարարության տպագրման համար՝ համայնքապետարանի կողմից ներկայացված անդորրագրերի հիման վրա:

18. Համայնքի վարչական տարածքում արոտավարձ է սահմանվում յուրաքանչյուր բնակավայրի արոտավայրերի տարեկան զուտ եկամտի 15%-ի չափով՝ հաշված մեկ պայմանական միավոր անասնագլխաքանակի համար՝ 1 հա չափաբաժնով: Այն անասունների համար, որոնք արոտների

սեզոնի ընթացքում տեղափոխվում են արտագնա արոտների, արոտավարձը կհաշվարկվի 50%-ի չափով՝ անասնատիրոջ դիմումի առկայության դեպքում: Ըստ բնակավայրերի արոտավարձի միջին չափ է սահմանվում.

1) Ագարակաձոր բնակավայրի համար՝ (7400+2500+8000)/3=5966,7x15 % ≈ 900 ՀՀ դրամ
2) Աղավնաձոր բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250x15% ≈ 800 ՀՀ դրամ
3) Արենի բնակավայրի համար՝ (2500+8000)/2=5250x15% ≈ 800 ՀՀ դրամ
4) Արփի բնակավայրի համար՝ 2500x15% ≈ 400 ՀՀ դրամ
5) Գնիշիկ բնակավայրի համար՝ (18600+13300+7400)/3=13100x15% ≈ 2000 ՀՀ դրամ
6) Ելփին բնակավայրի համար՝ (18600+13300+8000)/3=13300x15% ≈ 2000 ՀՀ դրամ
7) Խաչիկ բնակավայրի համար՝ (2700+8000)/2=5350x15% ≈ 850 ՀՀ դրամ
8) Չիվա բնակավայրի համար՝ (2500+7400)/2=4950x15% ≈ 800 ՀՀ դրամ
9) Ռինդ բնակավայրի համար՝ 8000x15% = 1200 ՀՀ դրամ

19. Համայնքի տարածքում, միջպետական ճանապարհի եզրերին, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական վճար սահմանել հինգ հարյուր ՀՀ դրամ՝ մեկ ամսվա համար:
20. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ:
21. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար ՀՀ դրամ:

* Նշված գների վրա, ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, կիրառվում է 0,5 գործակից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 121

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 430 000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 122

### 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի և 34-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 122 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Աշխատակիցների թվաքանակը՝ 65**

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԾԱԾԿԱԳԻՐԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 260,000 | 260,000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 1 | 230,000 | 230,000 | |
| 3 | Համայնքի ղեկավարի մամուլի խոսնակ | 1 | 1 | 200,000 | 200,000 | |
| 4 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 5 | Չիվա բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 6 | Ռինդ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 7 | Խաչիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 8 | Արփի բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 9 | Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 240,000 | 240,000 | |
| 10 | Գնիշիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 200,000 | 200,000 | |
| 11 | Ագարակաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| | *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | | | |
| 12 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 300,000 | 300,000 | 1.2-1 |
| 13 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-1 |
| 14 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-2 |
| 15 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-3 |
| 16 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-4 |
| 17 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-1 |
| 18 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-2 |
| 19 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-3 |
| 20 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-4 |
| 21 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-5 |
| 22 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-6 |
| 23 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-7 |
| 24 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-8 |
| 25 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-9 |
| 26 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-10 |
| 27 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-1 |
| 28 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-2 |
| 29 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-3 |
| 30 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-4 |
| 31 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-5 |
| 32 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-6 |
| 33 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-7 |
| 34 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-1 |
| 35 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-2 |
| 36 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-3 |
| 37 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-4 |
| | *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | | | | |
| 38 | Հավաքարար | 2 | 4 | 91,276 | 182,552 | |
| 39 | Հավաքարար | 5 | 6 | 88,312 | 441,560 | |
| 40 | Գիշերային պահակ | 2 | 2 | 88,312 | 176,624 | |
| 41 | Համայնքի ղեկավարի վարորդ | 1 | 1 | 200,000 | 200,000 | |
| 42 | Գործավար | 1 | 1 | 120,000 | 120,000 | |
| | *Այլ պայմանագրային աշխատողներ* | | | | | |
| 43 | Անասնաբույժ | 2 | 2 | 91,276 | 182,552 | |
| 44 | Անասնաբույժ | 5 | 5 | 88,312 | 441,560 | |
| 45 | Ռինդ և Չիվա բնակավայրերի անասնաբույժ | 1 | 1 | 120,000 | 120,000 | |
| 46 | Մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 1,5 | 2 | 91,276 | 136,914 | |
| 47 | Մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 2,5 | 4 | 88,312 | 220,780 | |
| | **Ընդամենը** | **56** | **65** | **7,887,076** | **9,042,542** | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 123

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման 1-6 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված 1
Արենի համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 123 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 30

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Բնակավայր | Հաստիքային միավոր | Աշխատակիցների թվաքանակ | Դրույքաչափ 2020 | Դրույքաչափ (ամսեկան) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՈԱԿ-ի տնօրեն | Արենի | 1 | 1 | 220000 | 220000 |
| 2 | Հաշվապահ | Արենի | 1 | 1 | 150000 | 150000 |
| 3 | Պայմանագրերի և գանձումների պատասխանատու | Արենի | 1 | 1 | 150000 | 150000 |
| 4 | ՀՈԱկ-ի տնօրենի օգնական | Արենի | 1 | 1 | 150000 | 150000 |
| 5 | Խմելու ջրերի ջրբաշխ | Ագարակաձոր | 1 | 1 | 88312 | 88312 |
| 6 | Աղբահանության մեքենավար | Ագարակաձոր | 1 | 1 | 88312 | 88312 |
| 7 | Աղբահանության բանվոր | Ագարակաձոր | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 8 | Կոյուղագծերի պատասխանատու | Արփի | 1 | 1 | 88312 | 88312 |
| 9 | Խմելու ջրերի ջրբաշխ | Արփի | 1 | 1 | 88312 | 88312 |
| 10 | Խմելու ջրերի ջրբաշխ | Աղավնաձոր | 2 | 2 | 88312 | 176624 |
| 11 | Ոռոգման ջրերի սպասարկող | Աղավնաձոր | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 12 | Աղբահանության տրակտորավար | Աղավնաձոր | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 13 | ՀՈԱԿ-ի բանվոր | Աղավնաձոր | 1 | 1 | 91276 | 91276 |
| 14 | Փողոցների մաքրության պատասխանատու | Արենի | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 15 | Էլեկտրիկ | Արենի | 1 | 1 | 120000 | 120000 |
| 16 | ՀՈԱԿ-ի բանվոր | Արենի | 1 | 1 | 91276 | 91276 |
| 17 | Աղբահանության տրակտորավար | Արենի | 1 | 1 | 91276 | 91276 |
| 18 | Ոռոգման ջրերի ջրբաշխ (սեզոնային 6 ամիս ) | Արենի | 3 | 3 | 91276 | 273828 |
| 19 | Աղբահանության տրակտորավար | Ելփին | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 20 | Խմելու ջրերի ջրբաշխ | Ելփին | 1 | 1 | 91276 | 91276 |
| 21 | Խմելու և ոռոգման ջրերի ջրբաշխ | Գնիշիկ | 1 | 1 | 115000 | 115000 |
| 22 | Աղբահանության տրակտորավար | Խաչիկ | 0,5 | 1 | 88312 | 44156 |
| 23 | Խմելու ջրերի ջրբաշխ | Խաչիկ | 1 | 1 | 91276 | 91276 |
| 24 | Աղբահանության տրակտորավար | Ռինդ | 0,75 | 1 | 88312 | 66234 |
| 25 | Խմելու ջրերի ջրբաշխ | Ռինդ | 1 | 1 | 91276 | 91276 |
| 26 | Խմելու ջրերի ջրբաշխ | Չիվա | 1 | 1 | 88312 | 88312 |
| 27 | Աղբահանության տրակտորավար | Չիվա | 0,5 | 1 | 88312 | 44156 |
| Ընդամենը | | | **27** | **30** | **2795120** | **2795861** |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

Հավելված 2
Արենի համայնքի ավագանու
«06» դեկտեմբերի 2019թ-ի թիվ123 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 20

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 3 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 4 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 5 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 6 | Երաժիշտ-դաստիարակ | 0,75 | 1 | 98000 | 73500 |
| 7 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 91276 | 91276 |
| 8 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 91276 | 91276 |
| 9 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 91276 | 91276 |
| 10 | Խոհարարի օգնական | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 11 | Բուժքույր | 1 | 1 | 91276 | 91276 |
| 12 | Խոհարար | 1 | 1 | 91276 | 91276 |
| 13 | Դռնապան | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 14 | Լվացարար | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| 15 | Հավաքարար | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 16 | Ֆիզ. ղեկ | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 17 | Պարուսույց | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| Ընդամենը | | 13,61 | 20 | 1624036 | 1311988 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

Հավելված 3
Արենի համայնքի ավագանու
«06» դեկտեմբերի 2019թ-ի թիվ 123 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 14

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 3 | Դաստիարակ | 1,12 | 1 | 98000 | 109760 |
| 4 | Դաստիարակ | 1,12 | 1 | 98000 | 109760 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 88312 | 88312 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 88312 | 88312 |
| 7 | Երաժիշտ-դաստիարակ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 8 | Բուժքույր | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 88312 | 88312 |
| 10 | Դռնապան | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 11 | Լվացարար | 0,25 | 1 | 88312 | 22078 |
| 12 | Հավաքարար | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 13 | Ֆիզ. դեկ | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| 14 | Պարուսույց | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| Ընդամենը | | 9,74 | 14 | **1331628** | **939905** |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

Հավելված 4
Արենի համայնքի ավագանու
«06» դեկտեմբերի 2019թ-ի թիվ 123 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

**ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 3 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 4 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 91276 | 91276 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 88312 | 88312 |
| 7 | Երաժիշտ-դաստիարակ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 8 | Բուժքույր | 0,5 | 1 | 88312 | 44156 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 88312 | 88312 |
| 10 | Դռնապան | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| 11 | Լվացարար | 0,25 | 1 | 88312 | 22078 |
| 12 | Հավաքարար | 0,5 | 1 | 88312 | 44156 |
| 13 | Ֆիզ. ղեկ | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| 14 | Պարուսույց | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| Ընդամենը | | 9,74 | 16 | 1328664 | **939905** |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

Հավելված 5
Արենի համայնքի ավագանու
«06» դեկտեմբերի 2019թ-ի թիվ 123 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Ազարակաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 3 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 4 | Դաստիարակ | 1,12 | 2 | 98000 | 109760 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 91276 | 91276 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 88312 | 88312 |
| 7 | Երաժիշտ-դաստիարակ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 8 | Բուժքույր | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 91276 | 91276 |
| 10 | Դռնապան | 0,75 | 1 | 88312 | 66234 |
| 11 | Լվացարար | 0,25 | 1 | 88312 | 22078 |
| 12 | Հավաքարար | 0,5 | 1 | 91276 | 45638 |
| 13 | Ֆիզ. դեկ | 0,25 | 1 | 91276 | 22819 |
| 14 | Պարուսույց | 0,25 | 1 | 88312 | 22078 |
| Ընդամենը | | 9,74 | 16 | **1331628** | **942869** |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

Հավելված 6
Արենի համայնքի ավագանու
«06» դեկտեմբերի 2019թ-ի թիվ 123 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի Արվեստի դպրոցի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը` 16

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 110000 | 110000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 1 | 98000 | 49000 |
| 3 | Դաշնամուրի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 4 | Դաշնամուրի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 5 | Քանոնի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 6 | Գեղանկարչության դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 7 | Զարդարվեստի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 8 | Պարուսույց | 1 | 1 | 98000 | 98000 |
| 9 | Պարուսույց | 1 | 1 | 98000 | 98000 |
| 10 | Զուռնայի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 11 | Շվիի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 12 | Դհոլի դասատու | 1 | 1 | 98000 | 98000 |
| 13 | Տնտեսվար | 0,75 | 1 | 88312 | 66234 |
| 14 | Դռնապահ | 0,5 | 1 | 88312 | 44156 |
| 15 | Օպերատոր | 0,75 | 1 | 88312 | 66234 |
| 16 | Հավաքարար | 0,75 | 1 | 91276 | 68457 |
| Ընդամենը | | 14,25 | 16 | 1544212 | 1384081 |

Աշխատակազմի քարտուղար` Գևորգ Սիմոնյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 124-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Հաստատել Արենի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 2 էջից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենի համայնքի ավագանու 6 դեկտեմբերի 2019 թվականի
թիվ 124-Ն որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:
2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝
   - հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,
   - հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,
   - խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,
   - ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,
   - հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,
   - վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:
3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, տնային ռեստորաններ, սրճարաններ, բարեր, գինետներ, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:
4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:
5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:
7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:
8. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:
9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:
11. սահմանված շինություններում ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:
12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:
13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:
14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):
    - ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման
    - ճաշացուցակը պետք է լինի հայերեն, ռուսերեն, անգլերեն
15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:
    - Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:
    - Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:
16. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:
17. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:
    - Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:
18. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:
19. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:
20. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 125-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.10.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի ավագանու 18.10.2019թվականի <<Արենի համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն, բյուջեի եկամտային մասը ավելացնելուն եվ վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումար հատկացնելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 107-Ն որոշման.

ա) 2-րդ մասի մեջ <<39 453 900(երեսունինը միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերը և թվերը փոխարինել <<33 453 900(երեսուներեք միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերով և թվերով,

բ) 3-րդ մասի մեջ <<24միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<քսանչորս միլիոն>> բառերով,

գ) 4-րդ մասի մեջ <<63453900 (վաթսուներեք միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերը և թվերը փոխարինել <<57 453 900 (հիսունյոթ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերով և թվերով,

դ) 4-րդ մասի <<ա)>> ենթակետի մեջ <<63միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<հիսունյոթ միլիոն>> բառերով,

ե) 6-րդ մասի մեջ <<1.5միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)>> բառերով և թվերով,

գ) 7-րդ մասի մեջ <<150հազար>> բառերը և թվերը փոխարինել <<150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) >> բառերով և թվերով

2. Արենի համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ Արենի հողի օտարումից մուտքեր գործառնական դասակարգման 29 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 2 600 000(երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Ֆոնդային բյուջեում ավելացված 2 600 000(երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը ուղղել կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 5112(շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին:

4. Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5113(շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից պակասեցնել 1 179 000(մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ և ուղղել.

ա) կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 5112(շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 424 000 (չորս հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ,

բ) Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 755 000 (յոթ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

5. Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել վեց միլիոն ՀՀ դրամ և ուղղել.

ա) կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի. 4252(մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 200 000(երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, 4822 (այլ հարկեր) հոդվածին 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի. 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին՝ 2 815 000 (երկու միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 605 000 (վեց հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

գ) կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

դ) ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ,

ե) Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

զ) Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 126

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Մերժել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Տիգրան Խաչատրյանի <<Աղավնաձոր բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող լողավազանի շենքը օգտագործման տրամադրելու մասին>> դիմումը,
2. Արենի համայնքի Աղավնաձոր և Խաչիկ բնակավայրերում, Տիգրան Խաչատրյանի հետ համատեղ, ուսումնասիրել և ընտրել համայնքային սեփականություն հանդիսացող համապատասխան այլ տարածքներ,
3. Առաջարկել համայնքի ղեկավարին նման տարածքների առկայության դեպքում, ներկայացնել ավագանու նիստի քննարկմանը՝ առաջիկա 5 տարիներին բիզնես գործունեություն իրականացնելու նպատակով Տիգրան Խաչատրյանին վարձակալությամբ հատկացնելու համար:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԵԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 127

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՀԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԻ ՈՒ ՋՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հարգել Ագարակաձոր բնակավայրի բնակիչ, առաջին կարգի հաշմանդամ, Ահարոն Հարությունյանի դիմումը և նրան ազատել 2019թվականի աղբի ու ջրի համար սահմանված վարձավճարներից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 128

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՎՈԼՈԴԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հարգել Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Աշոտ Վոլոդի Դավթյանի դիմումը և նրան տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 80000(ութսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 129

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» թիվ 14 նիստի արձանագրությունը՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն <<Եղեգնաձորի Վետերանների տարածքային խորհուրդ>> հասարակական կազմակերպությանը փոխանցել 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն՝ որպես ֆինանսական աջակցություն կարիքավոր վետերաններին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 130

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ ժ/պ Սմբատ Առաքելյանի դիմումը՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*.

Ուղերձ հղել ՀՀ Վարչապետին և Վայոց ձորի մարզպետին Վայոց ձորի մարզում պետական թատրոն ունենալու մասին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

*ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու*
*06.12.2019թ. -ի թիվ 15 հերթական նիստին*
*Հայաստանի Հանրապետության Վարչապետին և*
*Վայոց ձորի մարզպետին հղված ուղերձ*

Սույն թվականի հոկտեմբերի 30-ին Արենիի համայնքապետին է դիմել «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Սմբատ Առաքելյանը առաջարկելով ավագանու առաջիկա նիստի օրակարգում քննարկել Վայոց ձոր մարզում Պետական թատրոն հիմնելու հարցը և հանդես գալ համապատասխան միջնորդությամբ:

Եղեգնաձորի մշակույթի կենտրոնն արդեն մեկ տարի սերտորեն համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ իրականացնելով Վայոց ձորի մարզում թատրոնի և թատերական ավանդույթների վերականգնման ծրագիր, որի վերջնական նպատակն է Վայոց ձոր մարզում Պետական թատրոնի հիմնումը:

Մշակույթի կենտրոնի թատերախմբի կողմից Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» բեմադրված կատակերգությունը դարձել է համագործակցության առաջին քայլը և ջերմորեն է ընդունվել Վայոց ձորի, Շուշիի և Ստեփանակերտի թատերասեր հանրության կողմից:

Հաշվի առնելով, որ ցանկացած պետության համար թատրոնն ունի ռազմավարական նշանակության և մեր գոյության ու ազգային ինքնության պահպանման ճանապարհին թատրոնն է խաղում կարևորագույն դերերից մեկը, նպաստում ազգ-պետություն կապի ամրապնդմանը, ինչպես նաև այն մարդու և հանրության համար հանդիսանում է ինքնադրսևորվելու և սեփական կարողությունները բացահայտելու հնարավորության միջոց, համայնքի ավագանին Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Վայոց ձորի մարզպետին է հղում սույն ուղերձը՝ Վայոց ձոր մարզում պետական թատրոն հիմնելուն աջակցելու վերաբերյալ:

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ __________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ __________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ __________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ __________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ __________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ __________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ __________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ __________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ __________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ __________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 131-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածների պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի նախագիծը և առաջարկված փոփոխություններով երկամսյա ժամկետում ներկայացնել ավագանու հաստատմանը:

1. Եկամտային մասով՝ 385.791.900 ՀՀ դրամ, որից.

1) սեփական եկամուտներ՝ 109 002 000 ՀՀ դրամ

2) դոտացիա՝ 275.156.300 ՀՀ դրամ

3) սուբվենցիա՝ 1.633.600 ՀՀ դրամ

2.Ծախսերի մասով՝ 412.291.900 ՀՀ դրամ

3. Բյուջեի տարեսկզբի նախնական ազատ մնացորդը՝26.500.000 ՀՀ դրամ, որից.

1) Ֆոնդային մասով՝ 1.500.000 ՀՀ դրամ

2) Վարչական մասով՝ 25.000.000 ՀՀ դրամ

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՂԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**